ԵՐՋԱՆԻԿ՝
ԱՌԱՆՑ ՁԵՌՔԵՐԻ

BookMark

МАРГАРИТА ГРАЧЕВА

в соавторстве с Инной Шейкиной

СЧАСТЛИВА БЕЗ РУК

Реальная история любви и зверства

BookMark

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԳՐԱՉՈՎԱ
Ինննա Շեյկինայի հետ գործակցությամբ

ԵՐՋԱՆԻԿ՝ ԱՌԱՆՑ ՁԵՌՔԵՐԻ

Սիրո և խանդի ահասարսուռ պատմություն

Թարգմանությունը ռուսերենից՝
Անուշ Մուրադյանի

ԵՐԵՎԱՆ
2023

BookMark

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.3
Գ 870

Գրաչովա Մարգարիտա
Գ 870 Երջանիկ՝ առանց ձեռքերի: Սիրո և խանդի ահասարսուռ պատմություն / Մ. Գրաչովա.- Եր.: Newmag, 2023.- 260 էջ:

Թվում է՝ սա մտացածին պատմություն է կամ հոլիվուդյան սցենար: Անհավատալի է, բայց այն ամբողջությամբ իրական է: Դմիտրի Գրաչովն իր կնոջը 2017-ի դեկտեմբերին տանում է անտառ ու կտրում երկու ձեռքերը: Բժիշկները հրաշքով փրկում են Մարգարիտայի մի դաստակը, մյուսի փոխարեն հիմա պրոթեզ է, որի համար ամբողջ աշխարհին է փող հավաքել: Ինչո՞ւ ամուսինն այդպես էլ չընդունեց իր մեղքը: Ինչպե՞ս է հիմա ապրում Ռիտան, կկարողանա՞ մոռանալ մղձավանջը: Ինչպե՞ս հաղթահարել ընտանեկան բռնությունը, ապրելու ուժ գտնել: Այն էլ՝ երջանիկ ապրելու: Սիրո, գազանաբարո վարքի և նոր կյանքի մասին պատմող վավերագրական վեպի յուրաքանչյուր էջը գրված է ի խորոց սրտի:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.3
ԳՄԴ 84(4Լատ)-44

Գրքի գլխավոր գործընկեր
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
www.ena.am

ISBN 978-9939-884-54-7
© Маргарита Грачёва, текст, 2019
© АО 'Издательский дом 'Комсомольская правда', 2019
Մարգարիտա Գրաչովա, «Երջանիկ՝ առանց ձեռքերի» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Комсомольская правда ընկերության հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Ապրիր առանց ձեռքերի 9

Սովորական ընտանիք 23

Ինձ անհնար է չսիրել 35

2 — 0 — 1 41

Պարզել ճշմարտությունը 45

Ճանաչում ստանալ 53

Զլռել 63

Մենակ չենք 73

Ապաքինում 77

2017-ի նոյեմբերը 83

Հիշել միջադեպը 91

Որդիս միշտ ճիշտ է 101

«Մարդուն հունից հանեցին» 107

Տուն գնալու ժամանակն է 113

Հետաքննությունը չի շտապում 121

Դետեկտորը 127

BookMark

Նամակները 133
«Ես լավ հայր եմ» 137
Պրոթեզի հետևից 143
Դանիելան, Շտեֆանը,
Դրիկասն ու Սվետլանան 147
Սեփական ձեռքը 155
Կլինիկայի հիվանդները 165
Թանգարանը և
հեծանիվների քաղաքը 173
Բրեմենը 179
Պրոթեզներ Ռիտայի համար 185
Դեպի Սանկտ Պետերբուրգ՝
վերականգնողական բուժման 191
Դատը 197
Վկաների ցուցմունքները
և վերջին խոսքը 203
Վերջաբան 223

Bookmark

Ամրիր առանց ձեռքերի

BookMark

Այս գիրքը կարող էր չգրվել, բայց ոչ այն պատճառով, որ սարսափելի իրադարձությունները չէին պատահելու. ամեն ինչ կատարվել է, և դա հնարավոր չէ փոխել: Ռիտայի համար այդ օրերի մասին խոսելը շատ դժվար էր, նա հոգնել էր ուշադրությունից ու հարցուփորձերից: Սակայն մանրամասները՝ թե՛ լավ, թե՛ վատ, իր մեջ պահելն էլ հեշտ չէր…

Մոտավորապես մեկ տարի անց ես ու աղջիկս պարզեցինք, որ անցած ամիսների որոշ մանրամասներ տարբեր կերպ ենք հիշում, որոշ դրվագներ ընդհանրապես ջնջվել էին Ռիտայի հիշողությունից, իսկ ինչ-որ դրվագներ էլ ոչ մի կերպ չեմ կարողանում հիշել: Առաջարկեցի գրի առնել, Ռիտան հրաժարվեց, բայց ասաց. «Եթե այդքան շատ ես ուզում, քո մասին գրիր»: Սակայն դա իմ պատմությունը չէ, և այդ միտքը մի կողմ դրվեց: Իսկ հետո հեռուստացույցով հաղորդում տեսա Ռասա անունով, լիտվացի աղջկա մասին, որի երկու ոտնաթաթերը 1983-ին կտրել էր հնձիչ մեքենան, և այն մասին, թե ինչպես էին Մոսկվայում բացառիկ՝ ԽՍՀՄ-ում առաջին անգամ ոտնաթաթերի վերապատվաստման վիրահատություն արել: Աղջիկը մեծացել էր ու դարձել գեղեցկատես կին, որը ոչ միայն քայլում էր, այլև պարում: Հեռուստահաղորդման ընթացքում ոտքերը փրկելու զարմանալի պատմությունը դրվագ առ դրվագ վերհիշում էին օդաչուները, բժիշկները, լրագրողները: Մտածեցի, որ ես ու Ռիտան էլ պետք է գրենք 2017-ի դեկտեմբերյան իրադարձությունների մասին, որպեսզի շնորհակալություն հայտնենք բժիշկներին ու բոլոր կարեկից մարդկանց, որոնք սատարեցին Ռիտային ու փող հավաքեցին թանկարժեք պրոթեզների համար, նաև նրանց, ովքեր օգնեցին լուծել իրավաբանական խնդիրները,

պատրաստեցին արհեստական ձեռքը, մշակեցին կարված դաստակը, ովքեր աղոթեցին իմ աղջկա համար:

Այս գիրքը պետք է գրվի նաև նրանց համար, ովքեր ենթարկվում են ընտանեկան բռնության և չեն կարողանում բռնարարից բաժանվելու որոշում կայացնել: Գիրքը կպատմի նաև իրավապահ մարմինների աշխատանքի և այն մասին, թե ինչպես են Ռուսաստանում վերաբերվում ընտանեկան բռնությանը և թե այստեղ ինչպես են իրենց զգում հաշմանդամները:

«Մեծն Գեթսբին» կինոնկարում բժիշկը գլխավոր հերոսին առաջարկում է գրել այն իրադարձությունների մասին, որոնք անհանգստացնում են նրան ու որոնց մասին նա դժվարանում է խոսել, իսկ մոռանալն անհնար է: Նման մի բան նաև մեզ հետ էր կատարվում: Ես որոշեցի գրել այս գիրքը:

Ողբերգությունից մեկ տարի հետո Ռիտան երեխաների հետ վերադարձավ իր բնակարանն ու սկսեց ինքնուրույն ապրել: Նա դարձյալ մեքենայի ղեկին էր, երեխաներին մանկապարտեզ էր տանում ու բերում, իսկ երեկոյան հաճախ հյուր էր գալիս ինձ: Մի երեկո հիշեցինք Սերպուխովի հիվանդանոցի մասին, որտեղ Ռիտային առաջին օգնությունը ցուցաբերեցին, և ես համակարգչում բացեցի առաջին գլուխները, որտեղ պատմել էի այդ մասին: Ռիտան կարդաց ու որոշ ժամանակ լուռ նստած էր, ես սկսեցի անհանգստանալ. գուցե ինչ-որ բան այնպես չեմ գրել: Քիչ անց աղջիկս ասաց, որ անհրաժեշտ է, որ որոշ հատվածներ ինքը գրի, ու ես հասկացա. նա ընդունեց գիրքը: Այնուհետև մենք միասին էինք գրում: Ռիտան վերհիշում էր, իսկ ես գրի էի առնում: Գիրքն առաջին դեմքով չէ գրված, քանի որ նրա գլխավոր հերոսուհին՝

Մարգարիտա Գրաչովան, կորցրել էր ձեռքերը և ֆիզիկապես չէր կարող գրել: Բայց սա Ռիտայի գիրքն է, և գիրքը Ռիտայի մասին է, ու մի քիչ էլ իմն է: Սա գիրք է, որը միգուցե կօգնի ինչ-որ մեկին հաղթահարել դժվարություններն ու առաջ գնալ: Կպատմի այն մասին, թե ինչպես քեզ ձեռքերումդ պահես, անգամ եթե դրանք չկան:

Ժամանակ կանցնի, ու Ռիտայի հասունացած տղաները կկարդան այս գիրքն ու սկզբնաղբյուրից կիմանան, թե ինչ է եղել 2017-ի դեկտեմբերին: Թեմաներ կան, որոնց մասին դըժվար է խոսել, և հարցեր, որոնց դժվար է պատասխանել մի քանի րոպեում: Մեր փոխարեն դա կանի մեր գիրքը:

Ինա Շեյկինա և Մարգարիտա Գրաչովա

BookMark

Տարրական դպրոցում
Ռիտան երազում էր
ատամնաբույժ դառնալ, բայց
բարձր դասարաններում
հասկացավ, որ
կենսաբանություն այնքան էլ
լավ չգիտի ու մտափոխվեց:
Ուզում էր մեծ ընտանիք,
հինգ երեխա ունենալ:

BookMark

11.12.2017

Երկուշաբթի, առավոտյան 10:00

Սերպուխով քաղաքի Ն. Ա. Սեմաշկոյի անվան հիվանդանոցի ընդունարանում բժշկական օգնության սպասող այցելուներն այդ օրը սարսափելի տեսարանի ականատես եղան: Երիտասարդ տղամարդը բաժանմունք քարշ տվեց մի աղջկա: Նրա աջ դաստակի տեղում արնաշաղախ մի զանգված էր, իսկ ձախն ընդհանրապես չկար: Դաստակներից վերև ձեռքերը ձգված էին բժշկական լարաններով:

«Տեղից շարժվեք, չե՞ք տեսնում՝ մարդն առանց ձեռքերի է, շատ արյուն է կորցրել»,– բժիշկների վրա գոռաց տղամարդն ու արագ դուրս եկավ:

Աղջիկը, չնայած վնասվածքներին ու ցավային շոկին, գիտակցությունը չէր կորցրել և թելադրեց մոր հեռախոսահամարը:

— Զանգահարեք մորս, խնդրո՛ւմ եմ, երեխաները մանկապարտեզում են, նրանց պետք է այնտեղից վերցնել...

— Ինչպե՞ս սա պատահեց:

— Ամուսինս կացնով կտրեց ձեռքերս:

Տեսածից շփոթահար եղավ անգամ փորձառու բուժանձնակազմը: Վիրաբույժը ստիպված էր բառացիորեն գործի քշել բուժքույրերին: Ամուր կապված, հաշմված ձեռքերի վրայով ներքնաշորը հանել հնարավոր չեղավ, կրծկալը պարզապես կտրեցին: Բացի ձեռքերից արյունահոսում էր նաև ձախ ոտքը,

կացնահարած վերքերին չորս կար դրեցին: Աղջիկը վերջապես անզգայացավ: Սկսվեց դաստակների անդամահատման ու կճատ ձեռքերի ձևավորման վիրահատությունը:

Դմիտրի Գրաչովը, ինչպես և նախատեսել էր, հիվանդանոցից անմիջապես գնաց ոստիկանություն ու հերթապահ աշխատակցին խոստովանեց իր արարքը: Հերթապահը միայն ձեռքը թափ տվեց տարօրինակ տղամարդու վրա և խորհուրդ տվեց տուն գնալ ու քունն առնել, քանի դեռ լուրջ անախորժությունների չի բախվել: Բայց այդ պահին զանգահարեցին հիվանդանոցից, որտեղ Ռիտան էր: Գրաչովին ձերբակալեցին:

11.12.2017

երկուշաբթի,
առավոտյան 08:00

Այդ առավոտ Ռիտան ու Դմիտրին որոշել էին երեխաներին միասին տանել մանկապարտեզ: Ամուսիններն արդեն իրար հետ չէին ապրում և պատրաստվում էին ամուսնալուծվել: Վերջին ամիսներին ընդհանուր մեքենան վարում էր Դմիտրին. բաժանվելուց հետո մեքենան իրեն վերցրեց, բայց երբեմն օգնում էր երեխաներին տանել-բերելու հարցում: Գույքի բաժանման ու երեխաների համատեղ դաստիարակության հարցերը դեռ չէին քննարկել. Գրաչովը լուրջ չէր վերաբերվում կնոջ՝ ամուսնալուծվելու տրամադրվածությանը և մանրամասների մասին խոսելու իմաստ չէր տեսնում: Բացի